600.0244.09.06.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

9 հունիսի 2017 թվականի №244Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի №363Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՋԻՆՋ ԱՐՓԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի հունիսի 2-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում** է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 28-ի «ՋԻՆՋ ԱՐՓԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արփա-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №363Ա՝

   1) որոշման մեջ «մինչև 2018 թվականի հոկտեմբերի 17-ը» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի հունիսի 9-ը» բառերով».

   2) որոշման 2-րդ կետով հաստատված՝ «ՋԻՆՋ ԱՐՓԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Արփա-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0581 լիցենզիայի պայմանների 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. «Արփա-2» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 3000 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) հիդրոտուրբին №1՝ CJA237-W-90/1x9, 684-1702 կՎտ, 2016թ.,
2) գեներատոր №1՝ SFW1000-8/118, 1000 կՎտ, 2016թ.,
3) հիդրոտուրբին №2՝ CJA237-W-125/1x12.5, 860-2659 կՎտ, 2016թ.,
4) գեներատոր №2՝ SFW2000-12/176, 2000 կՎտ, 2016թ.:»

2. «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2015 թվականի հոկտեմբերի 1-ի №652-9188 գրությամբ ներկայացված №ՀԲԵՆ15/113-01 երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած յոթ միլիոն դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
9 հունիսի 2017թ.
ժամը 16[00]